

ԽԱՅԱԿ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍԸ

ԱՆՏԱԲԻ

30 ՆՈՅԵՄԲԵՐ, 1911

ԹԻԻ 4

Իմքաղապես
Մ. ԻՓԷՓՃԵԱՆ

Արսոնաք
Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ո՛ւր է Վրսն հուրիւնը (հմբ.)

Ա՛յ Զարբի՛ր

Պօլստիան Կեանք

Ափ մը հող Հայրենիքս (բանաս.)

Վերածնունդի Դարը

Գաւառային Վուրեր

ԳՄՐԵԳՈՐՆԻ ԱԹԵՂԵԱՆ

ԻՐԱՄԻԿՈՆ ՎՍՐԺԱՊԵՏԵՆ

ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ

ԱՐՄԷՆ ԻՐԱՆԿՈՒՆԻ

Թ. ԺԱՄԿՈԶԵԱՆ

ԱՄԱՍԻԱ

Տպագր. ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԵՄԵԱՆ

«ԱՄԱՍԻԱ»-Ի ՀԱՍՑԷՆ

آماسیه ده «آماسیه» غزنه سی مدیریت

Խմբագրություն «ԱՄԱՍԻԱ» Կիսամյակային հանդեսի - Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie c'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին և 15ին, թուրքերէն և հայերէն բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12էջ: Երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն տարեկան 24 թիւ պիտի տրուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիոյ տարեկան	1 մեցիս	Արամասիան տարեկան	3 դր.
» վիցամսեայ	0.50 »	» վիցամսեայ	2.50 »

Բաժնեգիրք բացարձակապէս կանխիկ է: Մանուցումներու համար առանձին նպաստաւոր պայմաններ կը տրուին:

Տառք օրինակ «Ամասիա» տպաստչին՝ մէկ օրինակ նուէր:

ՀԱՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ

Այն հեղինակներն որ կը փափախն իրենց երկերը թերթիս մեջ ծանուցուած տեղի երկր քարտեհանին մէջեկ օրինակ տնոնցմէ ուղարկել խմբագրութեան:

ԲՈՂՈՐ ԹԵՐԹ ԱՏԱՅՈՂՆԵՐՈՒՆ

Անոնք որ մինչեւ ցարդ ո՛չ իրենց զրկուած թերթերը ետ զրկեցին եւ ո՛չ ալ երկստիւղով մը իրենց զրկուած թերթին դադարումը պահանջեցին օրինաւոր բաժանորդներ առձանագրելով՝ սկսանք թերթի առաւումը շարունակել: Հետեւաբար թող քարտեհանին փութացնել բաժնեգիրները, թերթիս բաժնեգիրին բացարձակապէս կախիկ ըլլալը նկատարեցելով:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամասիայեն՝ ուրցիչ Արաւեսու էձ. Վեօկերեան մեկ տարեկան Ամասիա կը նուիրէ Լօսնոն Վեւոնց էձ. Արսլանեանի

Նոյնպէս Ամասիայեն՝ Սերովքէ էձ. Տ. Յակոբեան մեկ տարեկան Ամասիա կը նուիրէ՝ Սօնեմեքս՝ Տիգրան էձ. Պալղգեանի:

ԽԱՅԱԿԱՆ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

30 ՆՈՅԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 4

Խնդրագրական

ՈՒՐ Է ՎՍՏԱՅՈՒԹԻՒՆԸ...

Տէնէկ Մատէսի մէջ Սունկուլուցի Լեւոն Սահակեան կամուր հայ պիւնտրի մը Գատիր և Հասան անուն սպաներու կողմէ ստիպողաբար բռնաբարուիլը և նոյնպէս Հովգայի Գատական պաշտօնեաներու կողմէ Հովգայի մէջ Հայ կնոջ մը պատիւը բռնաբարելու համար եղած փորձերը տխուր կերպով նկարագրուած տեսած ըլլալու են, մեր ընթերցողները, թերթիս նախորդ թիւի Թուրքերէնի բաժնին մէջ:

Բնական է ընթերցող ամէն քաղաքացի այդ տողերը կարդացած ատեն ինքնաբերաբար մղուած է խորհելու թէ՛ ի՞նչ տեսակ տարրեր տակաւին կը գտնուին սահմանադրական երկրի մը պետական կազմին մէջ, և ո՞ւր է մնացած իւրաքանչիւր քաղաքացիի անձին, պատիւին ու ինչքին անբռնաբարելիութիւնը զծող սահմանադրական օրէնքը և վերջապէս ո՞ւր է վրաճանդութիւնը...:

Եւ իսկապէս իրատեսք չունի՞ն մեր ընթերցողները այդպէս մտածելու և քիչ մ'ալ տեղի տալ զնալով յանուն սահմանադրութեան ու հայրենիքի չափանշան նոյն իսկ իրենց արդար զայրութիւն ու բողոքը բարձրացնելու այս կերպ ճիւղալիս ու զազանային խժոժութիւններու հանդէպ: Ասիկա իրենց իրաւունքն ու նոյնիսկ քաղաքացիական աւագ պարտականութիւնն է:

Մենք կը խորհինք թէ Թուրքիոյ ներկայ իրականութեան մէջ ամէնէն

լուսամիտ ու ռահմանադրասէր տարրը զինուորականութիւնը կը ներկայացնէ, և զինուորութեան մէջ մեր գաւազներն ու եղբայրներն ամէն կերպ ապահովութիւն պիտի վայելեն:

Կը խորհէինք, կ'ընդունէինք ու կը հաւատայինք թէ դատական պաշտօնեաներն ալ ռահմանադրութենէ վերջ իբր օրէնքի ու արդարութեան պաշտօնեաներ, ո'չ միայն իրենք չպիտի գտնուին անարդար ու ինկրատ վիճակներու մէջ, այլ օրէնքին ամենախիստ արամադրութիւններ ի դորձ պիտի դնէին, այդ կերպ դադանային կեանքի մէջ գոնուողներուն հանգէպ:

Կը խորհէինք թէ՝ մեր թունդ կամ սուղի ճիշտը ձրի հայրենասէրները, երկրի սա ճակատագրային վայրկեանին, երբ հազարաւոր անմեղ հայրենակիցներու արիւնը կը թափուի, ի'նչան սուգի, իրենց գաղանային կիրքերէն գոնէ ժամանակաւոր կերպով պիտի ջանային հրաժարիլ քանի որ խումբ մը թիմու ազգայնամոլներ կու գեն՝ ժողովրդային զարգացման ստատուսը թաւարոնի և այլնի պէս ազդակներու ժամանակաւոր դադարումը, ի նշան սուգի:

Կը խորհէինք թէ՝ կեցրոնէն հեռու, հայկական նահանգներու մէջ թէև ամէն օր, ամէն կերպ բռնագրաւումներ ու ճիւղային ոճիրներ անպակաս են, սակայն կեդրոնի քիթին առկ գտնուող այս նահանգներուն մէջ այս կերպ գազանաբարոյ ընթացքներ գոյութիւն չեն ունենար:

Կը խորհէինք թէ՝ եթէ իսկ դոյութիւն ունենար, պատերազմական ու դատական նախարարները օրէնքի արամադրութիւններէն, ռահմանադրութեան սկզբունքներէն մղուած անմիջապէս կը ջախջախէին օձին գլուխը, դեռ թոյնը դուրս չի ժայթքած:

Սակայն իրականութիւնը կու գայ ըսել թէ մենք մեծ համոզումներուն, ենթադրութիւններուն ու հաւատամքին մէջ սխալներ ենք. թէ մեր երկրին զինուորական շրջանակին մէջն ալ, ուր կատարեալ վստահութիւն պէտք էր աիրէր, հայրենիքի պաշտպան գաւազներուն պատիւը կը բռնաբարուի եղբր թէ դատական շրջանակներու մէջ, ուր արդարութիւնը պէտք էր անպայմանօրէն թաղաւորէր, դժբախտաբար, արդարութեան այդ պաշտպանները կը փորձեն անկողճօրէն անմեղ կնոջ մը պատիւը իրենք իսկ բռնաբարել:

Ոչ, այս չէ ճշմարիտ հայրենասիրութիւնը, այսպէս չէ կարելի հայրենիքին ճակատագիրը տնօրինել: Ոչ, այս ընթացքով բոլոր քաղաքացիներու վստահութիւնն ու համակրութիւնը չի շահուիր. ո'չ, այս ճանապարհը մեզի արդարութիւն, եղբայրութիւն, ազատութիւն ու փրկութիւն չ'առաջնորդէր, ո'չ, այս միջոցները վերջ չեն կրնար տալ մեր իրաւացի ու արդարացի բողոքներուն ու զայրութիւններուն:

Յանուն հայրենիքի շահերուն, պէտք է փոխել այս գործունէութեան

ծրագիրը. պատժել անպարտաճանաչ պատասխանատուները, և կոխապան բարձրացնել վերեւ յիշուածի նման ճիւղները, որպէսզի արդարութիւնը տիրէ և ամէն մարդ շտախուի ըսելու թէ Ո՛ր է վստահութիւնը . . . : Այս կը պահանջէ ներկայ թուրքիոյ ճշմարիտ ազատագրումը :

ԳԱՐԵԳԻՆ ԱՌԷՇԵԱՆ

Ա՛Ն ԲԱ՛Ւ Է՛, ՍԹԱՓԻ՛Ր

Ա՛Ն բա՛ւ է, սթափի՛ր, հա՛յ գործաւոր. հերի՛ք գլուխ ծռես քարսիրտ, ժայռսիրտ գործատիրոջդ առջեւ, որ քու աշխատանքով իւզարկիթ ու կարկանդակ կ'ուռէ՝ հանգստուէս թիկնաթուռին վրայ բազմած ու քեզի օթեկ հացի մը փշրանքները կը կերցնէ՝ մերկ ստիստակամածին ու հողին վրայ նստեցուցած :

Ա՛Ն բա՛ւ է, արթնցի՛ր, հա՛յ երկրագործ որ կը բեղմնաւորես դաշտերը և քու աւժանքէդ ծնած ոսկեգոյն հասկ-զաւակները կալուածատիրոջդ հսկայ որովայնը ուռեցնելու կը ծառայեն միայն, և դուն նօթի տկլղ զաւակներդ չես կրնար որ-նուցանել իրենց հասկ-եղբայրներուն միջոցաւ :

Ա՛Ն բա՛ւ է, բարձրացո՛ւր գլուխդ, հա՛յ ուսուցիչ, որ զանեկդ ուղեղն ու աչքե-րուդ լոյսը կը կրճատես գիշեր, ցորեկ անընդհատ, նոր սերունդը դատարարա-կելու, ազնուաշնելու ու բարձրացնելու, ու կը վարձատրուիս ոչ թէ իբրեւ «մեծ գործաւոր» մը, ինչպէս որ ես ստուգիւ, այլ իբրեւ փոքր գործաւոր մը, չնչին աւուրչէքով և արհամարհող վերաբերմունքով դէպի անձը ու պաշտօնը :

Ա՛Ն բա՛ւ է, վեր առ սարուկի ճակատդ

հա՛յ կեղեքուած, որ զօրաւորն էր քը-մահաճոյքին ու կամքին թողուցած ես քու կեանքդ, քու ինքքդ, քու պատիւդ, որոնք անբռնաբարեկի իրաւունքներն ըլ-լալու էին քու մարդ էակի կոչումիդ, քու արժանապատուութեանդ ու գոյու-թեանդ :

Ա՛Ն բա՛ւ է, ցնցուէ՛, հա՛յ իգական սեռ, որ սահմանափակուած ես առտնին հոգե-րու և արական սեռին հաճոյքի առարկան դառնալու պարտաւորութեանդ մէջ մի-այն. ցուցուր թէ մարդկային զանգուա-ծին խկական կէտն ես դուն և ո՛չ թէ անոր շուրջը փաթթուած դարդարանք մը ըսկ. դո՛ւն ալ ունիմք այն իրաւունք-ներն ու գործը, որոնցմով է՛ապրի զան-գուածին միւս կէտը՝ այդ մարդը :

Սթափեցէ՛ք, արթնցի՛ք, գլտակցու-թեան հզօր թափով յառաջ նետուեցէք. ո՛վ քոյր զրկուածներ, անիրաւուածներ, կոխկոտուածներ, պաշտպանեցէք ձեր գոյութեան իրաւունքը, խօսքով, գրի-չով, բեժով և պայքարով, ընդգրկելով Մոցիսայ Դեոսիքոսիական վե՛ ու բարձր սկզբունքները, որուն տիեզերաանոյցը լա-տիւնքներէն կը բղխին առիարութիւն, ճշ-մարտութիւն, հաւասարութիւն և կեԱՆՔԸ :

Մարգուան

Ի. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՊՕԼՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Մեծ ուրախութիւն պատճառեց ինձ, երբ ստացայ նաև «Անասիա»-ի Բ. հատորը. բոլոր յօդուածներն ալ շատ ակործակով կը կարդայուէին. ինձ համար պակաս ուրախալի չէ նաև այն հանգամանքը, երբ գաւառացի լաւ գրողները ինչպէս Գ. Օզանեան և ուրիշներ ձեզ հետ են:

Հոգ, դուք աւելի սեծ և բարձր էք, քան նա մեր օրաթերթականները:

Ուրիշ բան է Պօլսը: Նա միջազգային է: Հոս ոչ մէկ աղօք, ոչ մէկ դատարար չ'ունի իր գուտ և անադարտ գաղափարաբանութիւնը: Մէկ կողմէն եւրոպական քաղաքային, միւս կողմէն ասիական իսլամական և այլ ազգերու մասնաւոր քաղաքակրթութիւնները միասնաբար քաղաքակրթութիւնները միասնաբար Պօլսական կեանք մը յառաջ եկած է:

Պօլսոյ անհատը չունի հաստատուն բնաւորութիւն մը. ինչպէս որ ըւր մէջ անկայուն է, այնպէս ալ ինքն է: Եթէ խօսքս մասնաւորեմ Հայկական Վրայ, նոյն բանը պիտի ըսեմ: Յունաց հետ շփուողը՝ Յունական, Թուրքացը՝ Թուրքական, Ֆրանսականին՝ Ֆրանսական տիպի անհատ դարձեր են: Հրապարակի վրայ եղած թերթերն ալ մեծ մասամբ Պօլսեցոյ կնիքը կը կրեն: Իւրաքանչիւր թերթ կը մտածէ այն միջոցներու մասին, որոնք կրնային շատ սպառել տալ իրենց թերթը: Օրինակ բոլոր թերթերը մանրամասնութեամբ կը զետեղեն քաղաքական և պետական լուրերը: Գաւառացու համար շատ լուրեր ամբողջովին աւելորդ են, սակայն Պօլսեցին ատոր չ'նայիր, բաւական է որ այդպէսով ալ աւելի շատ թերթ կ'սպառէ Պօլսոյ մէջ:

Ես սովոր եմ հայ-թերթերի տեսնել քննական և առաջնորդող հոգի վրայ, յատկապէս կովկասի մէջ. ատոր համար ես միշտ կ'սպասէի որ Պօսոյ թերթերն ալ անատոմիական քննութեան պիտի են-

թարկէին հասարակական կեանքը, արեւ առաջ դնէին անոր ակաւոր և փոսած մասերը, ու ձեռքերին սուր նշգարը բռնած՝ ալ ու ձախ անդամաւատէին... բայց ես սխալուած էի:

Ոչ մի անգամ՝ չտեսայ հայկական կեանքի լուրջ ուսումնասիրութիւն մը (ուրիշ կեանք մէկ կողմ թողինք դեռ), մեր յետամնաց պատճառներու քննադատութիւն մը:

Մենք գոհացած ենք մեր անցեալ փոքրով, արդէն բարձր անունով, «մենք անհամեմատ աւելի կրթուած ենք, քան օսմ. ուրիշ ազգերը» կը լսենք ամէն կողմանէ, սակայն միանգամայն կը մոռանանք կրիայի և նապաստակի առակը:

Այո՛, մենք գիտովցած մեր անցեալով, թմրած ենք, մեր մէջ դեռ կատարուած չէ հասարակական յեղափոխութիւն մը. այն յեղափոխութիւնը, որուն «միշտ օգնութեան է դիմեր, մարդ, իր տառապանքի մթաստուեր օրերուն մէջ» ինչպէս գեղեցկօրէն կը նկատէ Անասիայի մէջ Ժամկոյնանը:

Ահա այս խորհրդածութեանառաջը չէ որ կանգնած է Պօլսոյ օրաթերթը. այս կնճիռները չեն, որ կը լուծուին անոնց կողմանէ. բնա՛ւ. անոնք միմիայն գրագրութիւն լուրերու խողովակ մ'են. զանազան օտար թերթերու հաւաքածոյ մը, իսկ անխուսափելի յայտարարութիւնները... մըշտան ամենամեծ ասպարէզը...

Պօլսական մամուլը ըսի որ՝ արտայայտիչ է իսկական Պօլսոյ բնակչութեան. իսկապէս ինչ է Պօլսոյ հայութիւնը. աւոր մեծամասնութիւնը կ'անուած է առևտուրի աշխարհով. կը մնայ երիտասարդութիւնը. ո՛հ, անոր գերեզմանն ալ պատրաստ է... Բերան. Վոսփորը. այդ երիտասարդներու միակ խտնալը զգայականութիւնն է. անոնց կեանքի կեդրոնը օրիորդն է. իսկ մտածման առարկան՝

Թուալէթը: Ամբողջ օրը այդ գործողութեամբ զբաղուած անհատ մը, այլեւս երբ ժամանակ պիտի ունենայ գրականութեամբ պարապելու: Եւ երբոր Պօլսոյ որեւէ տեղ մը գիտական դասախօսութիւն մը տեղի ունենայ, դուք ոչ մէկ Պօլսեցի ուսանող կը գտնէք: Ասոր համար ալ ան հետք չի թողնուիր, գիտական և փիլիսոփայական հարցերու մէջ: Նա չը գիտէ ի՞նչ է կեանքը, ինչ է մարդկութեան իսկական նպատակը: Այսպիսի բնուի միջեւ մտաւ լինելու պիտի լինի:

Պօլսոյ երիտասարդութեան զարկերակը գաւառացի ուսանողութիւնն է: Եթէ չը լինի նա, չըլլար և ոչ մէկ հայկական ընկերային շարժում մը:

Այստեղի կեանքի հետաքրքրական կողմերէն մէկը ազգ. երեսփոխանական ժողովն է. սակայն նա իր աափակ, անհետաքրքիր բովանդակութեամբ և տգէտ, անխելաստ պատգամաւորութեամբ, չի կրնար և ոչ մէկ ընդհանուր յեղաշրջում յառաջացնել:

Գիտական և հասարակական կեանքի կողմանէ մըմիայն մէկ տեսական գործ մը կայ, այն ալ «Կայծ» ամսաթիւերն ու Ս. Դ. Հնչ. Ուս. Միութեան պարբերական դասախօսութիւններն են:

Հոն է որ կը ծնծուի գիտական, փիլիսոփայական հարցեր, հոն է որ ուսանողութիւնը կը ծախսէ իւր ժամանակը աւելի օգտակար: Սակայն ուրախ ենք յայտնելու ձեզ, որ դաշնակցական ուսանողութիւնն ալ հետեւելով Ս. Դ. ուսանողներու ընթացքին, այս օրերս կազմակերպուած հանգէս եկան: Ի սրտէս ուրախ ենք: տեսնենք ինչ պիտի ընեն:

Շեշտելու է որ Պօլսոյ կեանքի հետաքրքրական կողմերէն են նաև պարբերական դասախօսութիւնները, լինի Հրնչականներու, լինի դաշնակցականներու կողմանէ: Եթէ քաղաքական կուսակցութիւններն ալ չը լինէին, արդեօք Պօլսոյ գոյութիւնը դարձնալ նախասահմանադրականը չ'պիտի լինէր. անտարակոյս:

Թէպէտ գրագէտներէն մեծ մասը հոս են, սակայն չեն կրնար գրական ուրջ կեանք մը յատուց բերել. մենք հարցք պարզ դրինք, «չեն կրնար, ուրիշ ոչինչ»: Մեր գրագէտները անկարող են, անոնք գրագէտ տիպոսին արժանացան այն առիթն, երբ առիւծ չեղած տեղը մուկն ալ առիւծ էր. իսկ հիմա դուքս գալ չեն համարձակիր: Մենք կըստանանք նոր կեանքի, նոր սերնդի. և դո՛ւք դաւաճացի բնկերներ, մի գարմացէք, այդ նոր սերունդը լը պատրաստուի: Նոյնպէս նախկինում մութ խոնաւ անկիւններուն մէջ, չոր հացը ջուրը թաթխած. սեօր մը կանցնէ, սակայն միւս կողմէ, մեղի նման նա կը պատրաստուի «գալոց օրերին»: Հոս նոր սերնդի աղջիկ, մաքուր նախապատրաստութիւն մը կա, ապագայ հարգողներու, փայլուն աստղերու: Երկունք մը կայ:

Գաւառացիներ, ձեռնարկութեան համար չէ, այլ՝ անկեղծօրէն. թող ձեզ չը յուսահատութիւնի նկարագրած Պօլսոյ տիպը պատկերը. անգամ մը ձեր ուշադրութիւնը դարձրէք այն բազմաթիւ ուսանողական միութիւններուն վրայ, և լի յոյսով սպասեցէք...:

ԱՐՄԷՆ ԿԵՏՈՒՐ

Կեանքը ովկիանոս մըն է. լողա՛ եթէ կարող ես. քե ոչ ճակն անցի՛ր:

Վ. ՀԻԻԿՈ

Խիստ պատէ՛ մանուկը, երբ անիկայ միջոց մը կ'սպաննէ. որովհետեւ մարդասպանութիւնն անկէ սկիզբ կ'առնէ:

ԱՓ ՄԸ ՀՈՂ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

Ափ մը հող առե՛ք իմ հայրենիքէն,
Քննել զինք ու իր տարրերը, բոլոր
Մասնիկներն, ուր պիտի՛ գտնե՛ք դուք ամեն
Հասերէն բազում տարին մ'ահաւոր...:

Ափ մը հող առե՛ք իմ հայրենիքէն,
Ուր պիտի՛ տեսնե՛ք դուք կուրծք մ'որ բիւր չար-
կոտհարութեան: Դեմ երկաթեղէն լեաց,
Կամֆոլ է կեցեր, վեհ, հերոսացած...:

Ափ մը հող առե՛ք իմ հայրենիքէն,
Սորվելու դասը հաշին, հերոսին. [են,
Ազգի մը պարսփն ուր շատ լաւ ցուցուած
Երբ չ'էք ուզեր որ ապրի՛ք կեանք մը սին...:
Ամասիա

Եղբորս՝ իմ երեմնի ուսուցչին

Ափ մը հող առե՛ք իմ հայրենիքէն,
Եւ տեսե՛ք թէ հոն ծիլն ազատութեան,
Արեամբ հայ ազգին չէ՞ բողբոջած, էն
Դեռ չէ՞ ոռոգե՛... Էր այդպէս ունայն...:

Ափ մը հող առե՛ք իմ հայրենիքէն,
Տարե՛ք Անոր որ սեղծեց մեզ հայ...
Եւ այսպէս ահե՛ք, որք, թուառ, անգին
Թողած կարգայ զեռ մեզ լուսանք ու վայռ...:

Բայց իզուր ավստ՝ս կը ձայնեմ այսպէս՝
Ափ մը հող առե՛ք իմ հայրենիքէն,
Չի կայ ունկնդիր հայ երգչին ի տես,
Ողջ աշխարհ լուռ է, զոգցես եղս՛ծ տե՛ն...:
ԱՐՄԵՆ ՄԱՆԱԿԻՆԻ

Պատմական

ԱՇԽԱՐՀԻ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԵԾ ԶԱՐԺՐԻՄՆԵՐԸ

Ա.

ԻՍԱՑԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՎԵՐԱՄՆՈՒՆԴԻ ԴԱՐԸ (Renaissance)

«ԼՈՂՍ, աւելի՛ լոՂս»

ԿԵՐԹԷ

Ըսինք թէ լեզուափոխութիւնը իր պատմական վճռական դերը կատարած է կամ կը կատարէ (1) խնացական, (2) կրօնական, (3) ֆալսական և (4) քննական աշխարհներուն մէջ, ի հարկէ աստիճանական զարգացման ամրակուռ հիման վրայ կանգնած: Ուրեմն բանա՛նք հսկայական այդ ըմբոստ շարժումներուն առաջին վարձոյրը, և տեսնենք իմացական աշխարհը շահավառող ու մարդկային մտքին հրաշապատում ծաղիկը բաշտող անմահ լեզուափոխականները. տեսնենք անոնց կատարած մեծագործութիւնները, և ընդ-

հանուր քաղաքակրթութեան սեղանին առաջ անոնց մատուցած զոհարար ծառայութիւնները, ու գիտակցինք թէ ի՞նչ է մարդ անհատին պատասխանատու դերն ու բարձր կոշտութիւնը իր ազդած դաշտին հանդէպ:

* *

Դիտենք թէ եւրոպական ներկայ քաղաքակրթութիւնը կազմուած է պատմական երեք գլխաւոր տարրերէ. — Դասական (classical), Եւրոպական ու Տեւոնական: Դասական տարրը կը բաղկանայ հին աշխարհի արուեստներու, գրականու-

Թեանց, գիտութեանց, դադափարներու, ընկերային ու քաղաքական բոլոր օրէնքներու այն ամբողջական մարմինէն, զորոնք բնդհանուր քաղաքակրթութեան նուիրելին հին Յուններն ու Հռովմայե ինկերը մէկ խօսքով, ինչպէս Յոնք աշխարհն սուսու գեղեցիկը, Հռովմայեցին սուսու օրհնի, Եւրոպեցին՝ կրօնի, և Տեւտոնք (Գերմանք)՝ ինքնալստանութեան ազգս ողին:

Քաղաքակրթութեան այս քառակող տարրերն են ահա, որ միջնադարեան հազարամեայ թմբիրէն միահամուռ դուրս կը պոսթկան Արդ. և Վերդ. դարերուն մէջ, ծնունդ տալով այն նշանակալի շրջանին, որ իրաւամբ կոչուած է վերածնունդի անունը: Իմացական նշանակալի շրջանը ժամանակաշրջանն էր սա, որ եկաւ պատմական նոր ուղին բանալու՝ նոր ազգերու առջև:

Ինչպէս որ կրօնական յեղափոխութիւնը Գերմանիայէն պայթեցաւ և քաղաքական յեղափոխութիւնը Ֆրանսայէն, նոյնպէս ալ իմացական յեղափոխութիւնը պայթեցաւ Իտալայէն, և որ միայն տեսնական յեղափոխութիւնը պիտի պայթի Թերեւս Ռուսիայէն...

Վերածնունդի դարը չէր ուրիշ բան, եթէ ոչ եռանդագին նոր շարժում մը՝ դէպի դատական գրականութիւնը, և դէպի դատական ուսումն ու արուեստը, որոնք այնքան պայծառօրէն փայլեցան միջին դարու վախճանին՝ Իտալիոյ մէջ, զարգայական նոր շաւղ մը բանալով ամբողջ եւրոպայի առջև: Վերածնունդի, իր լայն առումով, մարդ էակին ուժեղ վերածնունդն էր դէպի այն ծանօթ՝ այլ պահ մը մոռցուած աշխարհը, ուր դատական նութեան կարգն ու կուլտուրան յատկանշող, ինքնալստան ու քննախոյզ ոգաւ ոգին կը տիրէր: Վերածնունդի դարը վերջապէս եղաւ այն լայնածաւալ յեղաշրջումը եւրոպական կամքին ու

մտքին, որով մարդը պատուելով միջնադարեան տգիտութեան թանձրամած քուղը, և փշրելով միանգամայն միջնադարեան գերութեան այն ժանգոտած չղթաները, նախ վերոտալաւ իր զգայարաններուն ու բանականութեան բնական իրաւունքները, և նոյնպէս անհատական ազատագրութիւն: Ուսման ու գիտութեան ուժեղութեամբ դարձանք սակայն այս բնդհանուր յեղաշրջումին վճռական փակեցող: Նախ, սակայն, իմացական յեղափոխութեան ազդեցութեան առիթ, մեղմուածք եւրոպային սխալ խորհիւ ու զգալ, և կեանքի ու արտաքին աշխարհը վրայ նայիլ այնպէս. ինչպէս բրին հին Յուններն ու Հռովմայեցիները, և ինչպէս պիտի բնէին այժմեան մարդերը:

Բայց ի՞նչպէս նախքան վերածնութիւնը Իտալիոյ մէջ յեղաշրջուաւ, և անկէ սկսաւ ծաւալիլ եւրոպայի չորս կողմերը, քննենք ու տեսնենք:

Պատմական իրադարձութիւն մըն է թէ քաղաքակրթութեան ամենահին որրանը նախդասալի է վաղեմի Եգիպտոս, ուրկէ Փլուինիէ իք անգգալաքար քաղաքակրթական տարրական ատաղձներ փոխադրուած են միջերկրականը շրջապատող բոլոր երկիրները, ինչպէս թիթեռնիկներ ծաղկէ ծաղիկ թռչելով, առանց գիտնալու, բեղմնափոշիներու փոխանցումով կը բազմապատկեն ծաղիկներու տեսակը: Եգիպտոսէն առիւնջապէս ետք սակայն ամենաքաղաքակրթ երկիրը կը գտնենք ին Յունաստանը, ուր ժարդկային միտքը այնքան սուր թռիչներ առած է, և որուն աստեղագարդ կամարը այնքան լուսաւորներ փայլեցուցած են որ աշխարհ այսօր ցարդ հիացումով ու պաշտանքով մրայն կը մօտենայ անոր: Սոկրատ, Պլատոն ու Արիստոտել՝ մարդկային փիլիսոփայութեան պատկառելի երրորդութիւնը կազմած՝ աղդէն բաւական եղան Գ. է դարեր առաջ իմացական

խոշոր շարժում մը յառաջ բերելու իրենց երկրին մէջ ճիշդ այնպէս, ինչպէս Քս. է դարեր ետք, Սահակ և Մեսրոպ յեղափոխելով հայ միտքը, յառաջ բերին Հայկական Ոսկեդարը:

Հին Յունաստանէն անմիջապէս ետքն ալ քաղաքակրթութիւնը կը քաշէ դէպի Հռոմ, — դէպի Իտալիա, ծնունդ տալով քաղաքակրթական նոր հոսանքի մը, զոր Հռոմէական քաղաքակրթութիւնն կ'անուանենք: Հոն ալ կը տեսնենք Վիրգիլիոններ ու Հորատիոններ, Կիկերոններ ու Սենեկաներ, որոնք իրենց ապրած դարը պանծացնող, և սերունդներ իրենց հաւէն քաջող յեղափոխական մեծամեծ միտքեր էին նանգիտալիս: Ուրեմն ինչո՞ւ բուն իմացական յեղափոխութիւնը կը բերինք մինչև ժեռ ու ժՁ դար, քանի որ արդէն անկէ շատ առաջ սկսած էր այդ շարժումը:

Թէպէտ Յունաստան ունեցաւ իր Պերիկլէսի դարը, Հռոմ՝ Օգոստոսի դարը, և Հայաստան՝ Մեսրոպայի դարը, բայց Իտալիան եղաւ ընդհանուր վերածնունդի դարուն մայրն ու հայր'նիքը: Որովհետեւ Հռոմէական պետութեան անկումէն անմիջապէս ետքը եկաւ միջնադարու այն Հաղարամնայ ժամանակաշրջանը, ուր քաղաքակրթական հոսանքը յետադարձ ուղղութեամբ կարծես կանգ առաւ, և համակ եւրոպան ինկաւ խոր քունը մը մէջ, իմացականապէս, ապա կրօնապէս և ապա քաղաքականապէս ու տնտեսապէս, բայց պէտք չէ մոռնալ որ Հռոմէական այն նոյն քաղաքակրթութիւնը ծլած ու ծաղկած էր Իտալիոյ մէջ, և Իտալիոյ չուրի, և միջին դարու վերջերս ուրիշ երկրներէ շատ աւելի Իտալիոյ մէջ էր որ ու բնագոյն թափով կ'արտայայտուէին այն բոլոր ազդեցիկները, որոնք կոչուած էին այդ միջնադարեան ամպոտ աշխարհը արդի բացաւոր աշխարհին վերածելուն: Հետեւեալ շատ բնական

էր որ Իտալիան լինէր վերածնութեան ընտելացոյն կեդրոնը, քանի որ Իտալիոյ հասարակապետական քաղաքները, ինչպէս Ճէնովա, Վենետիկ, Քիզա և մանաւանդ Ֆլորենցիա՝ հին աշխարհի Աթէնքներուն, Աղէքսանդրիաներուն ու Կարթագոններուն մեծամեծ գերբը կը կատարէին: քանի որ Հռոմէական աշխարհածաւալ պետութեան բեկորները արդէն սփռուած էին Իտալական պարսրո հողին վրայ, բայց յաւաքար՝ զարթոնցանելու և հրահրելու համար սիրտն ու հոգին այն ժողովուրդին, որ իր լեզուովն ու արիւնով ամենահարազատ շառաւիղը կը նանգիտային Հռոմէացիները:

Եւ անոն այդ ժողովրդեան մէջէն էր որ ծնան Տանդէ ու Բեդրարք, երկուորեակ ռաւոյրաները իմացական յեղափոխութեան Տանդէ՝ Աստուածային կոսմոկրոնքան այդ անմահ հեղինակը, վերածնունդի փառաւոր դարուն այդ հագեցունչ մարդարէն, իր գիւյազներդութեամբ ժողովուրդը զարթոնք մը գեղեցիկ արշալոյսը կը նախատեսէր: մինչդեռ Բեդրարք՝ դասական հին մատենագրութեան այդ նանգարեղ սիրահարը, բուն եռանդով սկսաւ շորս կողմէն հաւաքել հին աշխարհի գրական թանկագին գանձերը, Կիկերոնի նամակները, Պլատոնի, Հոմերոսի ու Վիրգիլիոսի յաւէտ յիշատակի գործերը, որոնցմով փոխան միջնադարեան Աստուածաբանական գրականութեան՝ ստեղծեց աշխարհական այնպիսի նոր գրականութիւն մը, զոր կոչեցին Հիւմանիզմ, և այն գրական նոր շաւիղին՝ հետեւողներն ալ կոչուեցան Հիւմանիստեղներ:

Բեդրարքի ստեղծած այս կենսունակ շարժումին խոչնդոտներ դնել ուղեքին օրուան կրօնական հայերը, և սակայն ան այնպիսի հակայական ծաւալում մը գտաւ ամէն կողմ, որ դեռ ցայսօր ցրտաբանաց աշխարհին մէջ՝ անոր թողած ազդեցութիւնը զգալի կը դառնայ:

Այսպէս ա՛հա Բեդրարք իրեն հետ ունեւնալով բանաստեղծներու առաջինները և փիլիսոփաներուն ալ հանճարեղները, ըսկըսու ըստալ նոր դպրոց մը, որուն հետեցան շատ մը ուսանողներ: Իր աշակերտներուն մէջ ամենանշանաւորն հանդիսացաւ Պոգգաչին, որ ճիշդ իր վարպետին օրինակէն շեղուելով, ջանաց նախ Յունաստէն լեզուն սորվել, հին հեղինակներու ձեռագիրները հաւաքել, և վերջապէս տարօրինակ սէր մը ու եռանդ մը ցոյց տուաւ հանդէպ Յոյն գրականութեան, որմէ նախապէս իրենց ներշնչումները ստացած էին հին Հռովմայեցի մասնագիրները: Պոգգաչիօ նոյնիսկ իր ուսուցչին օժանդակութեամբ Ողիսականն ու Իլիականն ալ թարգմանեց, այնպէս որ այլևս Հիւսմանիւղներ ամէն կողմէ վանքերու և մենաստաններու փոշոտած անկիւններէն մեղուներու պէս հին ձեռագրերն սկսան ժողովտել, ինչպէս արտօրուան հնախոյճներ Բարկոնի աւերակներուն մէջ պեղումներ կատարելով կը ջանան ժողովել Արեւելքի հին քաղաքակրթութեան անգին նշխարները:

Ստեղծուած այս խաչոր հոսանքին առաջքը առնել ալ անկարելի էր դարձած, քանի որ անոր յառաջացմանը մեծապէս նպաստող երկու դօրաւոր դերակատարներ ալ երևան էին եկած, ա՛լ աւելի յառաջ մղելու զայն, և վերածնութեան դարը փութայնելու համար: Այդ երկու մօրիպներն էին Միտիլեան գերդաստանը և Պոլսոյ առումը:

Պետք է գիտնալ թէ այդ հին գրողներու ձեռագիրներն ու յիշատակարանները ժողովելու և զանոնք ժողովուրդին մէջ ծառայեցնելու գործը նիւթական մեծամեծ զոհողութիւններ պահանջող տաժանագին աշխատութիւն մըն էր. ա՛հա այդ գործին խոշոր դժուարութիւնները յանհուն մեղմացնող, գիտութեանց, արուեստից ու գրականութեան աւժանպէս զարկ

տուող ու քաջալեր հանդիսացող նշանաւոր գերդաստանը եղաւ Մետիլեան ընտանիքը՝ ֆիօրէնցայի մէջ: Մետիլեան գերդաստանին մատուցած անգին ծառայութիւնը՝ վերածնութեան փառաւոր մէկ էջը կը գրաւէ. Գօչիւօ, փառաւորն Լաւրէնտիոս և՛ մանաւանդ Լեոն Ժ պապը այդ անմոռաց գերդաստանին գլխաւոր ներկայացուցիչները ըլլալով վեհանքօրէն սատարեցին իրենց ժամանակակից մօքթ աշխատաւորներուն, մանաւորապէս Լեոն Ժ պապը այնպիսի մեծանձն առատաձեռնութեամբ ջերմ պաշտպան կանգնեցաւ իր դարուն իմացական այս մեծ յեղաշրջումին ու անոր հանճարեղ առաքեալներուն, որ իրաւամբ այդ դարը կոչուեցաւ նաեւ Լեոն Ժի դար:

Պոլսոյ անկումը սակայն եղաւ ա՛լ աւելի դօրաւոր ազդակ մը վերածնունդի երկներանգ դարուն. արդէն Մանսաւկան բարբարոսներու հետզհետեակոն արշաւանքները, ԺԳ ու ԺԵ դարերէն լսկըսելով՝ հարկադրած էին բնականացի Յոյները գաղթել դէպի Իտալիա: Ու երբ Պոլսը բոլորովին թուրքերուն ձեռքը ինկաւ 1453ին, այն ատեն յոյն փախըստականներ ա՛լ աւելի խումեցին Իտալիա, իրենց հետ բերելով միանգամայն Արեւմուտքին անձանօթ՝ յոյն հեղինակներու բազմաթիւ թանկարժէք ձեռագիրները, Հնութեան ուսմանց ու գիտութեանց զանձերը: Մինչդեռ Իտալացիք ծայրայեղօրէն սիրահարուած ըլլալով այն ամէն բաներուն, որոնք Յունական դրօշմը կը կրէին, սկսան աքսորուող ու գաղթող ուսեալ յոյներէն բազմաթիւ ուսուցիչներ ընտրել իրենց դպրոցներուն ու համալսարաններուն մէջ:

«Յունաստան չինկաւ, այլ գաղթեց Իտալիա, որ հին ատեն մեծ յուսաստան կը կոչուէր:» Իտալիա այսպէս երկրորդ անգամ ըլլալով յաղթուեցաւ Յունաստանի հանճարին առջեւ:

Մտաւորական այս վերազարթնումը սակայն չի մնաց սոսկ մտաւորական. ան իր ծոցէն դուրս տուաւ գործնական այնպիսի հրաշայիքներ, որոնք ցարդ կոչուած են ամբողջ աշխարհի վարելու: Մինչ ասդին Ֆիօրէնցա մտաւորական շարժման վառարանը կը հանդիսանայ, անդին Վենետիկ ու Ճենովա աշխարհագրական մեծամեծ գիւտեր ընելու կ'ելլեն. Գոյումպոս Ամերիկան կը գտնէ, և համագգային վաճառականութեան անսահման թոփոյ մը տալով՝ պատմութեան առջև կը բանայ նոր ու ընդարձակ առարկէզ մը: Մինչ մէկ կողմէն նորանոր երկիրներ ու շահաստաններ իրարու ետեւ լոյս աշխարհ կ'ուզան, միւս կողմէն մարդկային հանձարին մեծագոյն գիւտերէն մէկն ալ, կոյրմնացոյցն ալ կը հնարուի, ծովային վաճառականութեան ու հաղորդակցութեան հեշտագին դռներ բանալով. մէնչդեռ ասոնց հետ միասին ահա վառօրն ալ կուգայ աշխարհ, ընկերական ու քաղաքական կարգերը վեր ի վայր չըջելու համար: Բայց դեռ աւելին կար:

Մտաւորական զարթոնքը դեռ չէր գրտած իր լիակատար գոհացումը այս ամէնով հանդերձ. ան դեռ կը փնտռէր աւելի լոյս, միանգամ ընդ միշտ մարդկային կուրացած աչքերը վառ արեգի մը առջև քանալու հանար. և ի՞նչ քաղդ, ի՞նչ հիասքանչ գուգադիպութիւն... Արդէն արշալոյսը եկեր ու շատ էր կարմրեր, և մարդկութիւնը բոցավառ արեգին էր որ կըսպառէր լիայոյս. ահա այդ վառ արեգը Գիւստինեան հորիզոնէն ծագելով աբար աշխարհ լուսազարդեց: Տպագրութեան գիւտը, լոյսի մեքենան էր այդ, զոր անմահ կիւթէմպերկ, մարդկութեան այդ պաշտելի բարերարը ձեւեց, կազմեց ու կազմաւորեց «Լոյս, աւելի՛ լոյս» բացազանչելով:

Ա՛լ դուք երեւակայեցէ՛ք իմացական այն մեծ յեղափոխութիւնը, որ տեղի

ունեցաւ ժեռ ժԶ դարերուն մէջ, հիմնարկէ՛քը հանդիսանալով յաջորդական դարերու բոլոր բմբռնող շարժումներուն, որոնք եկան ստեղծել «նոր երկինք մը ու նոր կեանք մը» իրաւամբ:

Տպագրական գիւտը ամենամեծ օրհնութիւնը եղաւ ամբողջ մարդկութեան, քանի որ ա՛լ անոր շնորհիւ ամենագիւրամասալիլի պայմաններով մաքի գոյարները կը մանէին ժողովուրդին ամէն խաւերուն մէջ: Ա՛լ այսուհետեւ շատ բնական էր որ այն իմացական անեղ շարժումը գլէր անցնէր Արպիաններէն ալ անդին, դէպի արեւմուտք կամ դէպի հիւսիս, առաթուր ընելով ամէն խոշորօտ: Այնչո՛ւ ուրեմն մարդկային միաբնակ աւելի բարձր թռիչներով չի սաւառներ ամէն երկինք, ինչո՛ւ համար Կոպերնիկոս չի գար ջախջախել մարդուն եսականութեան ստեղծած երկրակեդրոնական վարդապետութիւնը, անոր տեղ հաստատելով Արեգակնային դրութիւնն գիտական վարդապետութիւնը, ինչո՛ւ համար Գալիլէոս մը հաւատաքնութեան անխժեղ առեանին առջև իսկ չի բացազանչէր «եւ ստիպին կը շար էի»:

Ինչպէս որ վերածնունդ քրականութիւնը, անոր հետ վերածնունդ նաեւ արեւեստը, որուն մէջ նկարչութիւնն ի մասնաւորի կատարելութեան ծայր աստիճանին մօտեցաւ: Իտալիան հռչակելով զերարուեստի հայրենիք: Միքայէլ Անճելօ, Ռափայէլ, Լիօնատար տալինչի եյն. դեռ իրենց գլուխ գործոցներով ո՛չ միայն իրենց դարուն, այլ և ներկայ Իրդ սոկեդարուն փառքն ու պսակը կը կազմեն:

ԻՄԱՑԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ այսպէս ժԶ դարուն ցնցեց իր հիմերէն այն թմրած եւրոպան իր տգիտութեան ու նախապաշարութեան մէջ, ինչպէս Թորանական մեծ յեղափոխութիւնը, ԺԸ դարուն իրենց հիմերէն սարսեց բռնապետներու ժախարդը աթոռները իրենց

անագորոյն գազանութիւններուն մէջ : նոնց սրտերն ու հոգիները իրմէն անմի-
վերսնոթեան ԳԱՐՆ էր որ ինչպէս ջապէս վերջ հրաւիրելու համար կրօնա-
բայաւ մարդոց մտքերը, բացաւ նաեւ ա- կան յեղափոխութիւնը :

ԹԱԴԻՈՍ ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԳԱԻԱՌԱՅԻՆ ԼՈՒԻՐԵՐ

ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Թուրքոյ մէջ երբ բան մը մէկ օր առաջ
իւր սուտ կը խօսուի, վաղը իրական կը
գառնայ այդ : Ի նարկէ այսօրինալ հա-
զարու մէկ երկայթներ քնանաճոյժի տրապե-
տքեկնեմ միայն կրնայ ըզլիւլ : ոչ թէ օ-
րեկնի : Ինչ որ մեր երկրին սովորական
փոխան է դարձած : «այսօր սուտ վա-
ղը իրաւ :»

Ամիսներ առաջ իւր անհաւատալի բան
մը կը խօսուէր թէ՛ քրիստոնեաներէն ալ
20-45 տարեկան եղողները զնուոր պի-
տի առնուին : ահա այսօր վերջապէս այդ
ալ իրականութեան ճամբուն մէջ դնել
կը փորձուի : քաղաքիս մէջ անցեալ շաբ-
թու 30-45 տարեկան քրիստոնեաներուն
զինուորական քննութիւնները կը կա-
տարուին : և տեղւոյս զնուորականները
սպաննալիքի ձեւին տակ այնպէս մը կը
հաւատուն թէ՛ այս ձմեռ անպատճառ
պիտի զրկուին Սեպտտիա կամ այլուր :
մարդելու համար... Սա արդեօք յուսա-
հատական, ծայրայեղ ու անօրինի միջո-
ցն մը գլմել չէ՞, սա ժողովուրդին ար-
դէն իսկ վրդովեալ կայութիւնը ա՛լ ա-
ւելի վատթարացնել չի՞ նշանակեր : Իսկ
եթէ կայ թագաւն նպատակ մը երկրի
ներքին վիճակը ալեծփելու, դա ուրիշ
բան : և տակայն աստեղը գեռ չէ հասած
չա արումի, անճրկումի և վնասութեան
... : Սա առանց երես : Ժողովի կամքին
մշակ նախարարի մը խեղապատակէն դուրս
ժայթքած անքնական ու անիմն պահան-
ջը փոխանակ դարձան մը հանդիսանալու
ներկայ տագնապալից շրջանին համար,
կուգայ կասկածի և անվստահութեան ո-
րոմները բազմացնելու բազկացուցիչ բո-

լոր տարրերուն մէջ : Սթափեյէ՛ք : Էյ
ղեկավարներ : Թէ ոչ դուք էք պատառ-
խանատուները :

Աւետանի

ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻՆԾԻ ՄԷՉ

Մուշէն մէկուկէս ժամ ժողովն կը գրա-
նուր «Խորդակ» գիւղ : 45-50 տուն հա-
մնակիչներէ բաղկացած : Գիւղին մէջ
տիրող վերլին ծայր նութալան անձկու-
թեան պատճառաւ, շատերը Ռուսիա և
Ամերիկա գաղթած էին : Այդ դժբաղդ-
ներէն մէկն էր Գառապար, որ 25 տարե-
ի՛ վեր Ամերիկա կը գտնուէր, անխոն-
մութունը կունենայ իր գիւղը վերադառ-
նալու ուր իր տունը քանդուած կը գտնէ,
կ'ուզէ նորոգել ու կը ձեռնարկէ : մէրմ-
նայ նոյն : Տին գրչերը ժամը 3ին 15-20
զինուած քիւրտեր կը յարձակին Գառ-
պարի տան վրայ և չարաչար կը գաննեն
խեղճ Գառապարը : Ի՛նչո՞ւ այս աղեկատու
բարբարոսութեան, երբ կինը կը խնդրէ
որ գտնէ դրակը չի յօշոտն : զայն ալ
վիրաւորելով՝ ամբողջ տունը կը թալա-
նեն : Ահա՛, այս չորս օրուան մէջ նոյն
աւաղակներու կողմէ եօթը զիւղեր գիշե-
րային յարձակումներու ու թալաններու
մասնուէցան :

Այս աւաղակները «յալակի» ախրէք :
պետ, ՀԱՃԻ ՖԱՐՁԻԻ ծառաներն են ու
անոր հրահանգովը կը գործեն : Եւ հաճի
Ֆարզի ալ իթթիհատական տեղական
մարմնի աղդեցիկ անդամներէն ըլլալուն
կառավարութիւնը ուէ հետապնդում չի
կատարեր, քանի մը հայերու համար ա-
նոր սիրար վիրաւորել չուզելուն : Ար-
դէն տեղւոյս Միւթէսարըֆը յայտատեաց
քաղաքականութեան մը կը հեակի : Ա-

պահովութիւն ու վստահութիւն չ'կայ։ Սահմանադրութեան արդիւնքը ու պահանջը այս է արդեօք։ Կեդրոնական կառավարութիւնն ալ խոշոր գործերով զբաղած կարծես չուզեր ժամավաճառ ըլլալ քանի մը հայերու սպանութեան խընդիրով...։ Ամօթ ի դարուն։

15 Նոյ. Մուշ

Ժայռ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Նախորդ թիւով ըսած էինք թէ՝ Ս. Դ. Հնչակեան ակնաւոր գործիչ, տաղանդաւոր հեղինակ ու բնախօս Տեար Ս. Սապահ-Գիւլեան քաղաքս ժամանելով չարք մը բանախօսութիւններ պիտի բնէ։ Ժիշտ մեր գրածին նման յաջորդաբար 5-6 բանախօսութիւններ բրաւ Սօցիալ-Դէմօկրատիային հայեացքներն ու սկսեալքները պարզող ու բացատրող։ Այնպէս որ ամէն անհատ զգայ ու հասկցաւ թէ ընկերվարութիւնը բարձր ու վեհ սկզբունք մըն է։ Անոնք որ ասկէ առաջ ընկերվարութիւնը անբարոյութիւն կ'ուզէին ներկայացնել հասարակութեան, ամօթաւոր վար նայիլ սկսան։ Ամէն անհատ երազածէն ու ապաւածէն շատ աւելին գտաւ Ս. Սապահ-Գիւլեանի անձնաւորութեան մէջ։ Պատիւ հայ ազգին և իր պատկանած կուսակցութեան։ Սապահ-Գիւլեան «կանանց խնդիրը» նիւթին վրայ բանախօսութիւն մըն ալ տուաւ Ազջ. Կեդր. Վարժարանի մէջ՝ միմիայն կիներու։ Կիները ազգըւած բանախօսին խօսքերէն կազմակերպուիլ սկսած են, ինքզինքնին զարգացնելու համար։ Բանախօսութիւններու ամօթ. խուռն բազմութիւն մը ներկայ կ'ըլլար Հնչակեան քիւլպին մէջ և միշտ ծափաւարութիւններով կ'ընդմիջուէր բանախօսութիւններն, որոնք առնուազն 3-4 ժամ կը տւէին։ «Ամատիա»ի յաջորդական թիւերուն մէջ պիտի ջանանք բանախօսութիւններէն մէկ քանիներու ամփոփումը տպագրել։

Սապահ-Գիւլեան տեղէս մեկնեցաւ Եւ-

դոկիա, ուրկէ պիտի վերադառնայ այսօր կամ վաղը, և մենք կրկին զինքը լսելու բախտը պիտի ունենանք։

Գ. Պօլսոյ Ս. Դ. Հնչ. Ուսանողական Միութեան արշաւախումբի անդամներէն ՊՐ. ՎԱՀԱՆ ԶԵՅԹՈՒՆՅԵԱՆ Նոյ. 28ին քաղաքս այցիւելով՝ Հնչակեան քիւլպին մէջ «Սօցիալ-Դէմօկրատիան և Դատարարականութիւնը» նիւթին վրայ օգտակար բանախօսութիւն մ'ունենալով զէպի Պօլիս ուղեւեցաւ։

ԴԱԴԱՐՈՒՄ

Քաղաքիս մէջ Լեւոն Լանխի խմբագրութեամբ հրատարակուող «Ապառաժ» շաբաթաթերթը կրկին դադրած է։

ԶԻՆԱՎԱՃԱՌՆԵՐՈՒՆ

Խմբագրութեան ուղղուած պաշտօնագրով կը յայտարարուի թէ, ասկէ վերջ, արածնեալ ամէն կարգի գէնքերու փամփուշտները քօթնանի կողմէ պատրաստուելով մօտեաւոր նշանով մը հրապարակ պիտի կլլէ։

Ա.ԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Նորակազմ Ազգ. Հիւանդանոցի վարչութիւնը հիւանդանոցի համար վաճաճ է Պարսամ աղա Մանիրաճիկեանի օգտաւուն ու նպատակայարմար տունը։ Նախնական պատրաստութիւններէ յետոյ մօտաւոր ապագայի մը մէջ պիտի սկսին հիւանդներ ընդունիլ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆԲ

Յետադիմականները գործի վրայ են. միշտ պզտոր ջուրէն ձուկ սրնալու մարմալէն բռնուած, թուրք ուսմիկ տարբին կ'ուզեն հաւատադնել թէ՛ Թուրք և իւսալական պատերազմը Բուսական և Մալկեանական շարժումները Խոլամութեան և Բրիտանեութեան խնդիրներ են։ Զէ որ մենք ալ Բրիտանեայ ենք, պէտք է...։

Արսօնսկեր՝ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ

Խմբագրապէս՝ ՄԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ

Տպ ՅՈՎՀԱՆՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԵՄԵԱՆ

بو آجیلری اونوتسهق...
 و انسانلرک هپ بری برینه بکزهین، هیچ
 دکیشمهین طاشقین و مردار حرصلره، امللره
 باغلاندفلری سفیل حیاتک صوئوقلفیه تیرهین
 یچاره قلمزک صولغون هوسلری، زوالی
 سیواس

روحزک مبارک ارزولرینی حرارتلی عشقمز
 و ماتلی سودالرمزله یکیدن جانلاندیرسهق و
 و سربست و یاقین اقلردن او سربست و
 کیمسه سز عالمیره، سماره طوغری سوزوله رک
 آچلسهق!..

فیضی الله حمدوح

سنقورلی مخبر مخصوصمزدن
 کچنلرده سنقورلی ضابطاندن یوز باشی حسن
 و ضابور کتبی قادر افندیلرک صحاقیان لئون
 نام کولکلی بر عسکره جبراً فعل لواطه اجرا
 ابلرئدن طولابی تحت محاکمه ده بولندقلربی
 کچکی نسخه مزده عرض ایتشدک. مرقوم لئون
 بلدییه طبابتی طرفئدن معاينه ایدیلرک فعلک
 اجراسی بلدییه طبیبک راپویله ده تحقیق ایلدیکی
 حاکمه اجرا فلان محاکمه نتیجه سنده مغایر
 قانون و عدالت اوله برق مظنونلرک برایتلرینه
 قرار ورلدیکی کمال تأسفله استخبار قلمشدر.
 شمیدییه قدر امثالی وقوع بولامش اولان
 بو کبی جنایتلر حکومتجه نظر اهمیتیه الیه برق
 متجاسرلرک سربست بر اقلیمی شایان تأسف
 حاللردن دکلمیدر؟ محاکمه ایدن هیئت اشبو
 مسئله نک احباب حیتک غلیاتی موجب اوله جفی
 دوشونمیدی؟ عیبا هانکی بدر اولادینی عسکرلک
 وظیفه مقدسه نی ایفا ایتک اوزره قادر و حسن
 کبی ضابطلره تسلیم ایدر.

زیرا عسکرلر ضابطلرک ید حایه و نظارتنه
 تسلیم اولنورلر.
 عسکری دائره سنه دخیل اولان افراد
 آمرلی بولنن بالجه ضابطانک اولادی در.
 کرچه ناهوسلی بدرلردن اولادلره بو کبی حقارت
 مأمول ایداز ایسه ده شاید بو کبی دناستی
 ارتکب ایتش ایسه کر کمال فقرته لغت! ایتدیکن
 ایسه تکذیبکره شدتله انتظار ایلرز.

اماسیه

اماسیه غزیه سنه

مجید اوزی قضا سنک بوک قریب سندن قوی
 قصه اوغلی احمدک خانه سی قضاء یقیله برق
 مرقوم احمدله بکدش مخدومی رضانک انقاض
 التنده قالب متأثراً وفات ایتدکری علی
 قائم مقاملغنک اشعارندن اکلاشامشدر ۱۳۷
 تشرین ثانی سنه ۳۲۷

اماسیه متصرفی
 احمد ماجد

بر هفته دن برو اماسیه ده بولنن س.ت. هنجار
 قیان جمعیتی مرکز عمومیه رئیس صاحب کلیان
 افندی بر قاچ کوندن عودت ایتک اوزره
 تواقده حرکت بیورمشلدر.

ای قادر و حسن افندیلر! ضابطلک وظیفه
 منی بشقه صورتله تلقی ایتیکزه. ضابطلر! عسکر.
 لرک بدر و ناظر معنوی سی مقامنده درلر.

بوامنیه لرك حصوله سد چكلمكده اولدینی کبی دوچار فساد اولان ارکان حکومت ده بر ملتک تعالیسی ایچون اقتضا ایدن خلوص نیتدن، نفوذ و اقتداردن، حس حمیت و فداکاریدن نصیه دار دکلدی بناء علیه باشلانان اصلاحات تطبیق ایدیلهمدی.

تاریخک بوندن صکره کی صحافی قورقنچ بر سیداهی استبداد ایچنده کچر. نهایت عبدالحمیدک معلوم اولان دور شقاوتی کلبرکه بو دورده عناصر غیر مسلمه دکله، حتی عناصر مسلمه بیله باشلی باشنه یشامغه محکوم ایدلمش، ارالرنده کی هر درلو رابطه تخریب ایدلمشیدی.

(مابعدی وار)

عاشق زینل

شاعر آرزوسی

چورومش کیمک پارچه لری و قان کرم - کولکه لرله صفا بولان چیچکلی صحرالرده.. او
جکری ایکنجلیکندن طوکوب قالمش اسکی و یالکزقلرده طولاشهق
صولقون بر طوپراق؛ قریق و یوصونلی طاشلریله آه بونلر ممکن اولسه :- فقط یالکز سن
عمرک صوک آجیلقلری کوسترن قراکق و بن - ایملک بهار قوشلرینک اوولره سربیان
ور و خسته اوتلی مزارلر؛ هر قورقونچ سوغلی اوغولتورلی، بیاض کوپوک صاچهرق
دلیکنده آجی آجی اولویان پنجه بایقوش تونه دوکونه دوکونه آقوب کیدن جوشقون ایرماق
مش اوکسوز خرابلر و بونک اوزرنده دائما لرك دردلی چاعیلنلرنده کی نشئه لرله کولکلرک
بری برینی ییهن، بری برینی چکیشدیره. کدرلیری بیقاسهق، وارلغمزده کی آعمرقلردن
ناموس و وجدانلرینی کیرلی و اغورسز آیاقلر صیرلسهق...
آلتنه آلهرق هر درلو جنوارقلری، فناقلری خفیف روزکاری نپه لری بیاض و طورغون
یوره کلرنده هیچ بر صیزی طویقمسزک یابان بولوطلره قاریشان یوکسک و کیمسه سز طاغلرله
قاللی انسانلر و معناسسز، توکتمز دیدی مبدول و صافی هوالرینک تنفسنده کی حیات
قودیلری !! و سونینچ ایله یاواش.. یاواش یوکسلهک.. امر افز
سنکله بوتون بو غلبه لکدن، بوتون بو سفاک ده کی کوزلکلرک سیربله یورغونقلرمزی حس
ات اوجاغنک روحی طرمالایان بوغوجی ایتمه رک او سربست و کیمسه سز طاغلرده سیر
و اولدیرنجی آللمردن اوزاق؛ بک اوزاق بست و کیمسه سز اولهرق قالسهق..!
یرلره قاجهق. شو غلبه لکده کوردیکمز آزعقلری.. فلا
درین سسز لکلره اویویان صیق و ایصنر کتلی، ماتملری، شو غلبه لکده طاشیدیمز
اورمانلرک قالین و کینش یایراقلرینک یایدیی بویوک اضطرابلری، کدرلری برافسهق بوتون

غائب ایتمش، ارامزده کی رابطه اخوت و محادتی ازاله ایلش ایدک. تاریخمزی نظر دقبه آلیسه ق غازی میخال و اوره نوس بککک ملت عثمانیه ویردیکی مفاخر مظفریت سینه لرمن ده برد حس غرور و افتخار او یاندیرر .

او زمان عثمانی حکومتی بوتون دنیایه صاحبی شعله عدالت سایه سنده، عصیت ملیه سی زوال بزر اولمش حکومات سائر نك فدایر ارباب زکا و اقتدارینی سنجاغمرك سایه جلادتنه جلب ایده جك قدر قوتی ایدی. بو سایه ده كوچك بر عشیرت ایکن بویوك بر دولت اولدق ؛ بو سایه ده قاره لری ، دکرلری منتدار حاکمیت ایدک. صکره بو بر تو عدالت اطرافه شعله تار اوله میه جق قدر کسب ضعف ایتمک باشلادی .

سلیمان قانونی ایله برابر تاریخمرك صحائف جهانگیرانه سی قاپادندن صکره بوتون قوت و مهابتله ایلویه طوغری آیلان ایاقلرمن بردن بره توقف ایدی. سلطان محمودک، عبدالمجیدک دور سلطنتلرینه قدر هر کون رحمان سیاسیندن اهمیتلی قسملر ضایع ایدن بر ملت حالنده ایدک بو ایکی بویوك پادشاه دولت عثمانیه بر طریق تجدد ، بر استقبال تعالی احق ایستدی .

اصلاحات فرمانیه کلخانه خط هایونی الك زیاده کوزه چاربان امراض اجتماعیه مزه چاره ساز اوله جق تدابیری احتوا ایتمک اوزره نشر اولمشیدی . ایشته ایلک دفعه عناصر غیر مسلمه بی عناصر مسلمه ایله مظهر مساوات ایدن ماده لر بو ایکی بیاننامه ده کورلدی . دیمک که او زمانه قدر بو مساواته هیچ رعایت ایدلماش ، مذاهب مختلفه نك چیزدینی دائرة تعصب دن حقیقه کیه - سائک خاطرینه کلمه مشیدی . خرستیان و طنداشلر مزدن نه مأمورلر التمشیدی ، نه عسکر یالیشیدی ، نه بونلر وطنک دوغریدن دوغریه اولادی حقنده یایله جق معامله به تابع طو تلمشیدی بو شرائط التنده مذهبی، لسانی، اصول و عاداتی آیری اولان بر ملت البت کندی کندینه بر غایه تشکیل ایدره ک موجودیتی، موجودیت قومیه و مذهبیه سی محافظه ایتمک ایستر .

انسانلر جمعیتله یشامق احتیاج فطریسند اولدقلری ایچون بو احتیاج دیگر بر احتیاجی ده ها تولید ایدرکه : اوده تشکیل ایتدکری جمعیتک ویردیکی شرف و حیثیه حصه دار اولقدرد .

خرستیان و طنداشلرمن مذهبلرینه، قومیتلرینه طوقونولمادن عثمانیلق شرف و حیثیتنه عثمانی دولتک ویردیکی عزت تابعیه مالک اوله مامشلردی . چونکه عثمانی دولتی ، عثمانی حکومتیه علاقه لر کیسالتورینک تأسیس ایتدیکی حکومت غریبه ایله پیدا ایتدکری علاقه به نسبت به ک ضعیف ایدی بونی ایجاب ایدن اکثریت ملیه یی تشکیل ایلان عناصر مسلمه نك تابع اولدینی شکل اداره ده کی عدالتسزک ایدی . ایشته کلخانه خطیه اصلاحات فرمانی بو اساسلی مرض اجتماعیه مزه تأمین دوا ایدیوردی . فقط نه چاره که عثمانی دولتی بو اصلاحات جدیه بی استراحتله ، امنیتله تطبیق ایدیه یلمک ایچون لازم اولان سکون سیاسیدن محروم ایدی. نه چاره که داخلی و خارجی بر چوق غوائل

امانییه

طشره منادیسی

نومرو ۴

تشرین ثانی ۳۰ سنه ۳۲۷

برنجی سنه

وحدت عثمانیه

کچنکی مقاله مده بر از سویلشدم . اوتوزسنه دن بری عناصر مختلفه عثمانیه ایله ارامزده ناقابل املا اوچوروملر اچلدی .
حال بوکه مملکتک استقبالی بو کون آل اله ویره رک بوتون عثمانیلرک عینی غایه به متوجهاً یوروملرینی ، چالشمالرینی احجاب ایدیور .
فقط مع التأسف هیمز تأمین وحدت ارزوسنده بولندیغمز حالده بو ارزولریمزک انار فعلیه سی اظهار ایده میورز ؛ ماضیه شدت مربوطیتمز بزی بوندن منع ایدیور . شمدی نه یایلم که بو اوچوروملری املایه . بو وحدتی وجوده کتورمکه موفقیت ویرسون ؛ نه یایلم که بربرمزک حقیقی قارداش ، عینی وطنک آمال و آلامی ، اذواق و سعادتی مشترک ، ماضیسی ، آتییی بر اولادی اولدیغمزی بوتون جهان انسانیه اثبات ایده رک بویوک ملتله صره سنده (عثمانلی) ملتی ایچونده بر جای احترام تأمین ایده بیله لم ؟ ایشه اصل جواب ویریه جک مسئله ، اصل هر عثمانلینک دوشونمکله وظیفه دار اولدینی خدمت وطنپرورانه بودر
بو سئواله جواب ویرمک ایچون اولا بزی آیران سوائتک نه دن عبارت اولدیغنی دوغریجه تعیین اتمک لازم کلیر .

بو کون بولندیغمز نقطه دن بربرمز به باندیغمز زمان آیری آیری طریقله اوزرنده یورومک ایستدیگمزی کوریوروز . اولدن بری می بویله ایدک ؟ بوقسه صکره صکره بعض عوارض متوجه اولدیغمز غایه بی هر عنصره کوره تبدیل ایدرک باشی باشنه برر غایه ایدنه مزی می استلزام ابتدی ؟ حقیقته حصر و تخصیص ایستدیگمز شو ستونلرده دوغرودن باشقه بر شی سونک مسالکمز موافق اولدینی ایچون آچیه جه اعتراف ایده بیلرکه بز چوقدن بری بربرمزی

ՍՏԱՅՈՒԱԾ ԹԵՐԹԵՐ

- 1.- Աւստանգ.- Հրաւ. Իզմիր. Շաբաթաբեր 15 դր.
- 2.- Արմենիա - Մարսիլիա. Շաբաթաբեր խմբ. Մ. Փօրթուգալեան 20 ֆր.
- 3.- Բուրբոն.- Մարզուան Եկսուակներու. Ամսաբեր խմբ. Մ. Վարժապետեան 8 դր.
- 4.- Բիլլանիա.- Իզմիր սասնորեայ գաւառաբեր 20 դր.
- 5.- Նիկիա : Ս. Գ. Հնչակեան կիսապատեմական օրկան 4. Պոլիս 20 դր.
- 6.- Նիքոս - Կիսամետայ հանդէս տարբեր 20 դր.
- 7.- Կայծ - Ս. Գ. Հնչ. Կ. Պոլսոյ Ուսանող. Միութեան ամսաբեր օրկան 20 դր.
- 8.- Կոնակ - Կ. Պոլիս Շաբաթաբեր խմբ. Հ. Արամեանց 15 դր.
- 9.- Հայկունի - Մարզուան նորահասներու կիսամետայ հանդէս խմբ. Գ. Օզանեան
- 10.- Հող-Խար - Սեբասթիա Շաբաթաբեր խմբ. Կ. Պարսամեան 20 դր. (15 դր.
- 11.- Մարմնամարզ - Կ. Պոլիս Մարմնամարզ. Շաբաթաբեր խմբ. Շ. Քրիստոն 21 »
- 12.- Շող - Կ. Պոլիս Ուսանողական ամսաբեր 12 » [Կալիքի 12 »
- 13.- Ուսումնարան - Կ. Պոլիս Մանկավարժ. ամսաբեր խմբ. Մխիթարեան վրժ. Բան-
- 14.- Փարոս - Պարսիզակ Ամսաբեր խմբ. Շ. Բ. Ը. Ի 15. «

Բ. ՏԱՐԵՐԶԱՆ ԲՈՂԲՈՋԻ

1912 Յունուարի 5 եւ սկսեալ 15 օրը անգամ մը լոյս պիտի տեսնէ «Բողբոջ» նախ-կին օգտակար ուղղութեամբ: Տարեկան բաժնեգիրք բացարձակապէս կանխիկ ըլ-լալու պայմանով:

Թուրքիոյ համար 15 դր. իսկ արտասահ-մանի համար 5 ֆր. է: Բաժնեգիրք եւ ամէն կերպ գրուելու պէտք է ղրկել միմիայն Տե-րեկ-Խմբագրապետ Մամրիկոն է. Վարժա-պետեանի Մարզուան:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Մուտ.- Հ. Մ.- Ստացանք, կը տեսնեմ. շնորհակալութիւն, առանձին նամակ գրուե-ցաւ:

Սունկուորու.- Հ. Ս.- Դրամը գանձուե-ցաւ, նամակ կը գրուի, կը հրատարակուի Գահիրէ.- Ա. Ն.- Շնորհակալութիւններ, կը հրատարակուի:

Նւղոկիա.- Մ. Մ. Ինչո՞ւ լուռ եմ:

Շ. Կարանիսար.- Շնորհակալութիւն Զե-րզգացուներուն համար, Զե-ր փափաքին հա-մաձայն կարգադրեցինք:

Սամսան.- Մ. Խ. Զե-ր խոստման իրա-գործումին կ'սպասեմ:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ

(Ս.ՄԱՍԻՍ.)

Ոսկի գուրուն եւ պրիճ նաեւ սէյի-րոյս արհեստական ասամներ շինելու Ամերիկեան մեքոսը սուրվիլ ուղղ-բոլոր ասամնաբոյժներու կը յայ-տարարէ քէ ինք պատրաստ է այդ մեքոսը սուրվեցնել նպաստաւոր պայմաններով:

سفورطه جي

سيمون فارقيان

اماسيه

لا نيويورك عمر سفورطه سي ولا ليرال حريق

سفورطه قومانيه ترك اجيتى در.

مناسب شرائطه هر نوع سفه. طه بشري

بابار. آرزو ايدنلر بر دفعه تجربه ايتسونلر

چيشين اوتين اغا دكانك متصلده باعاني

(الى) پارهيه معدن كورى صابور.

هر كس فرصتدن استفاده ايلسون.

